ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 փետրվարի 2014թ. թիվ 35-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի 1-ին մասով, 1.12-րդ կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով քաղաքացիների դիմումները և զեկուցագրերը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից աջակցության նպատակով ութ քաղաքացու հատկացնել 265000 /երկու հարյուր վաթսունհինգ հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. փետրվարի 6
ք.Վանաձոր